ՀԿՀ դրամաշնորհների տրամադրման մոտեցումը

#քաղաքականության փաստաթուղթ

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ 3

Դրամաշնորհների տրամադրման նպատակը 3

Ֆեմինիստական ֆինանսավորման սկզբունքները ՀԿՀ-ի դրամաշնորհային գործունեության մեջ (ֆեմինիստական ֆիլանթրոպիա) 5

Դրամաշնորհային հայտի ընդհանուր և հիմնական չափանիշները 7

Մենք ֆինանսավորում ենք՝ 8

Ստացված դիմումների դիտարկում 9

Մենք չենք ֆինանսավորում՝ 10

Հայաստանում կանանց հիմնադրամի առաջնահերթ հիմնահարցերը 11

Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից դրամաշնորհների տրամադրման թեմաներ 11

Ֆինանսավորման փուլեր և ժամկետներ 12

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Հայաստանում կանանց հիմնադրամը դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն է, որն աջակցում է Հայաստանում կանանց[1] կազմակերպություններին, ֆեմինիստական նախաձեռնություններին, խմբերին և անհատներին: Մենք գործում ենք 2018 թվականից և հպարտ ենք, որ կարող ենք աջակցել ֆեմինիստական շարժմանը մեր ֆինանսական և մարդկային կարողություններով: 2020-2021 թվականներից ի վեր՝ ՀԿՀ-ն սկսել է մշակել իր հատուկ ռազմավարությունները, քաղաքականությունները և այլ փաստաթղթեր, որոնք Հիմնադրամի աշխատանքը դարձնում են առավել ռազմավարական և համակարգված:

ՀԿՀ-ն Հայաստանում եզակի ֆեմինիստական կազմակերպություն/հիմնադրամ է, որն աջակցում է ինչպես գրանցված կազմակերպությունների, այնպես էլ չգրանցված անհատների և նախաձեռնությունների:

Այս փաստաթուղթը Հայաստանում կանանց հիմնադրամի ռազմավարության և քաղաքականության խառնուրդ է, որը մշակվել է աշխատակազմի կողմից: Այն ներառում է դրամաշնորհների տրամադրման չափանիշները, առաջնահերթությունները և Հիմնադրամի ուշադրության ներքո գտնվող թեմաները:

Խնդրում ենք բոլոր դիմորդներին ուշադրությամբ կարդալ դրամաշնորհների տրամադրման ռազմավարությունը՝ նախքան դիմելը: Փաստաթուղթը հասանելի է ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն:

[1] Մենք հասկանում և ընդունում ենք այն փաստը, որ «կին» տերմինը բազմաչափ է՝ ներառյալ բազմաթիվ ենթաինքնություններ, կատեգորիաներ և արտահայտումներ:

Դրամաշնորհների տրամադրման նպատակը

- **Ռեսուրսների մոբիլիզացում** կանանց կազմակերպությունների, ՀԿ-ների, կանանց և ֆեմինիստական նախաձեռնությունների/խմբերի, ֆեմինիստ հետազոտողների, արվեստագետների և այլոց համար, ովքեր ցանկանում են նպաստել (կամ ակամա իրենց աշխատանքով նպաստում են) Հայաստանում ֆեմինիստական շարժմանը:
- **Փոփոխություններ կատարել դոնոր-դրամաշնորհառու հարաբերություններում,** որոնք մեծամասամբ հիմնված են իշխանության և ուժային հիերարխիայի վրա՝ ոչ միայն վերևից ներքև մոտեցման տեսանկյունից, այլ նաև կանանց՝ իրենց նախագծերի համար ֆինանսավորման մեծ աղբյուրներին հասանելի չլինելու տեսանկյունից:
- **Դոնորի և դրամաշնորհառուի միջև վստահության հարաբերությունների հաստատում և վերջինների համար գործընկեր զգալու միջավայրի ստեղծում:**
- **Ցանցային կապի ստեղծում** երկրի տարբեր շրջանների կանանց միջև և նրանց համախմբում՝ ավելի մեծ ֆեմինիստական համայնքի ստեղծման համար:
- **Կանանց տարբեր կարիքների ընդունում, ինքնահոգատարության, բարեկեցության ու ամոքման գործընթացներին կանանց անհասանելիության դեմ պայքար:**
- **Կանանց համերաշխությանը նպատակաուղղված նորարարական և համարձակ ֆեմինիստական մոտեցումների ձգտում,** հատկապես համավարակի, պատերազմի և գենդերի ու ֆեմինիզմի դեմ ուղղված մշտական պայքարի ու բացասական տրամադրվածության ժամանակներում:

Ֆեմինիստական ֆինանսավորման սկզբունքները ՀԿՀ-ի դրամաշնորհային գործունեության մեջ (ֆեմինիստական ֆիլանթրոպիա)

- Այո՛, մենք ֆինանսավորում ենք, բայց մենք «չենք պատվիրում երաժշտությունը». մենք հավատարիմ ենք այն համոզմանը, որ երբ մեր գործընկերուհիները ներկայացնում են նախագծի գաղափար, նրանք լավագույնս գիտեն, թե ինչն է կարևոր և անհրաժեշտ իրենց համայնքների համար: Իհարկե, մենք միասին աշխատում ենք ներկայացված նախագիծ-հայտի որակը բարելավելու համար (անհրաժեշտության դեպքում), բայց կարծում ենք, որ գումարի հետ կապված իշխանական հարաբերակցության համակարգում մենք՝ որպես Հիմնադրամ, չպետք է և չենք որոշի, թե կոնկրետ մարդկանց ինչ է անհրաժեշտ իրենց համայնքներում:
- Ցանցային կապը կարևոր է. Հիմնադրամի հիմնական նպատակներից է Հայաստանում ֆեմինիստական և կանանց շարժման հզորացումը, ինչը հավակնոտ նպատակ ու խնդիր է: Այդ իսկ պատճառով մենք ՀԿՀ-ում կազմակերպում ենք ցանցային հանդիպումներ մեր գործընկերուհիների, ինչպես նաև մեզ համար: Մենք մեր գործընկերուհիներին հրավիրում ենք նաև շփվելու և քննարկելու հարցեր առանձին՝ առանց մեր ֆիզիկական ներկայության հանդիպումների ժամանակ, որպեսզի թեմաները և գաղափարներն առաջանան ոչ թե մեր, այլ համայնքի կողմից:
- Համայնքներին ներգրավելով որոշումների կայացման գործընթացում, ֆինանսավորելով տարբեր նախագծեր՝ մենք խրախուսում ենք և հնարավորություն ենք տալիս նրանց մասնակցելու տարբեր գործընթացների, այդ թվում՝ քաղաքական: Երբ համայնքներն ունեն ֆինանսավորում, նրանք առավել վստահ են դառնում և կարողանում են ինքնակազմակերպվել ու գաղափարներ մշակել: Ֆինանսավորման անհավասարությունը և անարդարությունը կանանց և տղամարդկանց միջև բինարության հարց չէ: Դա շատ ավելին է, և մենք ամբողջովին ընդունում ենք այդ փաստը:
- Ծառայել ֆեմինիստական շարժմանը Հայաստանում. այո՛, մենք տեսնում ենք մեր արտոնությունը շարժման մեջ և խրախուսում ենք բոլորին կիսվել իրենց

գաղափարներով, թե ինչպես պետք է աշխատի ֆեմինիստ կանանց հիմնադրամը հենց ֆեմինիստական շարժման համար:

- Փոխակերպելով (ֆեմինիստական) ֆինանսավորման կանոնները, առաջարկելով ֆեմինիստական ֆինանսավորման սկզբունքների գաղափարը՝ մենք խրախուսում ենք մեր գործընկերուհիներին հետևել և զարգացնել այս սկզբունքներն իրենց կազմակերպություններում և աշխատանքում: Ֆեմինիստական ֆիլանթրոպիան արդեն ապացուցել է, որ իր բացառիկության շնորհիվ կանայք կարող են ավելի մեծ հասանելիություն ունենալ համաշխարհային ռեսուրսներին:
- Վստահելով և հարգելով մեր գործընկերուհիների ժամանակն ու փորձը՝ մեր համագործակցությունը նրանց հետ հիմնված է վստահության վրա: Ծրագրերի իրականացման գործընթացում մենք «վերահսկողության» անհրաժեշտություն չենք տեսնում:
- «Ոչինչ մեր մասին և առանց մեզ» մոտեցում՝ դրամաշնորհառու-գործընկերների համար. որպես հիմնադրամ՝ մենք ճանաչում և ընդունում ենք մեր սեփական արտոնությունները: Մենք չենք հրաժարվում այդ արտոնություններից, այլ դրանք ուղղում ենք մեր գործընկերուհիներին և նրանց առաջխաղացմանը (դա կարող է լինել, օրինակ, նրանց ֆինանսավորման այլ աղբյուրների մասին տեղեկացնելու միջոցով կամ աջակցելով նրանց դիմումի գործընթացում և այլն): Հիմնադրամի կողմից կազմակերպվող կարողությունների զարգացմանն ուղղված ցանկացած թեմա հիմնված է գործընկերուհիների կարիքների գնահատման և նրանց հետ քննարկումների վրա:
- Իշխանության դինամիկան. համաձայն նախորդ կետի և բազմաթիվ այլ սկզբունքների, որոնց մենք հավատարիմ ենք, ՀԿՀ-ն նույնպես փոխում է իշխանության դինամիկան, հատկապես երբ խոսքը վերաբերում է ֆինանսներին և որոշումների կայացմանը:
- Ներդրումներ կանանց կազմակերպությունների, խմբերի, նախաձեռնությունների կարողությունների և դիմադրողականության ամրապնդման գործում բազմաթիվ մարտահրավերների պայմաններում:

Ընդհանուր առմամբ, մենք հիմնվում ենք կանանց հիմնադրամների սկզբունքների վրա, որոնք կառուցված են ընդհանուր ֆեմինիստական արժեքների վրա.

- Ֆինանսավորել գենդերային ճնշումից առավել տուժած կազմակերպություններին,
- Ապահովել ակտիվիստների համար ճկուն և կայուն ֆինանսավորում,
- Կիրառել ինտերսեկցիոնալ հայեցակարգեր ֆինանսական շտեմարանների օգտագործման ընթացքում,
- Աջակցել գործադրվող ջանքերին, որոնք ուղղված են սոցիալական, մշակութային, իրավական և քաղաքականության փոփոխություններին,
- Դուրս գալ սոսկ դրամաշնորհներ տրամադրելու շրջանակից և աջակցել ակտիվիստներին կարողությունների զարգացման և առաջնորդության հարցերում,
- Ներդրումներ իրականացնել համակցված անվտանգության ոլորտում,
- Համագործակցել կանանց և այլ ակտիվիստների կողմից ղեկավարվող հիմնադրամների հետ՝ ապահովելու համար տեղային ֆինանսավորում:

Դրամաշնորհային հայտի ընդհանուր և հիմնական չափանիշները

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ձեր խումբը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին՝ դրամաշնորհ ստանալու համար.

- Կանանց կազմակերպություններ/խմբեր/անհատներ, որոնք աշխատում են Հայաստանում (մենք նաև փոքր դրամաշնորհներ ենք հատկացնում Սփյուռքի հայ կանանց):
- Կանանց կազմակերպություններ/խմբեր, որոնց գործունեությունն ուղղված է կանանց հզորացմանն ու հավասարությանը և մարդու իրավունքներին:
- Կանանց խմբեր, որոնք միասին աշխատում են ֆեմինիստական նախագծի վրա:
- Դիմորդները պետք է ունենան նաև ուժեղ ինտերսեկցիոնալ մոտեցումներ:
- Կազմակերպություններ, որոնք ղեկավարվում և կառավարվում են կանանց կողմից. կանայք պետք է կատարեն ղեկավար բոլոր դերերը կամ դրանց մեծ մասը:
- Որպես կին նույնականացվող անձիք և կանանց կողմից ղեկավարվող ֆեմինիստական կազմակերպություններ և/կամ ֆեմինիստական արժեքներ

ունեցող, Հայաստանում ֆեմինիստական շարժմանը նպաստող ֆեմինիստական կազմակերպություններ:

Մենք չենք կարող ֆինանսավորել բոլոր այն խմբերին, որոնք համապատասխանում են այս չափանիշների առաջին փաթեթին: Մենք մտադիր ենք առաջնահերթություն տալ այն խմբերին, որոնք.

- Հասանելիություն չունեն ինստիտուցիոնալ ֆինանսավորման և խոշոր դոնորների, որոնք պահանջում են մեծ գիտելիքներ դրամաշնորհային հայտերի վերաբերյալ:
- Կանանց ՀԿ-ներ և խմբեր, որոնք ունեն ուժեղ ֆեմինիստական տեսլական՝ անկախ իրենց գործունեության ժամանակաշրջանից:
- Կանանց խմբեր և նախաձեռնություններ, որոնք ներուժ ունեն շարունակելու մնալ ուժեղ և դառնալ ավելի մեծ նախաձեռնություններ:
- Տեղակայված են Հայաստանի մարզերում և այն աշխարհագրական տարածքներում, որոնք սահմանափակ ֆինանսական աջակցություն ունեն:
- Բարձրացնում են զգայուն հարցեր, որոնք էական նշանակություն ունեն կանանց իրավունքների հետագա զարգացման և կանանց/ֆեմինիստական շարժման կառուցման համար:
- Նախագծեր, որոնք մշակվում, ղեկավարվում և իրականացվում են դեռահաս աղջիկների կողմից:
- Աջակցություն և կրթաթոշակների տրամադրում անհատ հետազոտողներին և կին ուսանողներին գենդերային հավասարության թեմաներով նրանց հետազոտությունների համար:
- Աջակցություն վտանգի մեջ գտնվող կին իրավապաշտպաններին՝ ապահովելով նրանց անվտանգ տարածքով և վերականգնմանն ուղղված ծրագրերով:

Մենք ֆինանսավորում ենք՝

- Կանանց և ֆեմինիստական կազմակերպություններին (ՀԿ, ՔՀԿ),
- կանանց չգրանցված խմբերին և նախաձեռնություններին,

- կին անհատներին, ովքեր ցանկանում են ինչ-որ կերպ նպաստել տեղական կանանց/ֆեմինիստական շարժմանը,
- ֆեմինիստ ակտիվիստներին, կին իրավապաշտպաններին, ֆեմինիստ հետազոտողներին:

Ստացված դիմումների դիտարկում

Մենք երաշխավորում ենք, որ Հիմնադրամում դրամաշնորհների տրամադրման գործընթացը պարզ և թափանցիկ է: Մենք կարիք չունենք և հիմնականում աշխատում ենք ֆինանսավորման ստանդարտացված և հայրիշխանական գործընթացների դեմ, որոնց համաձայն դիմումատուները պետք է «մի լավ տանջվեն»: Որոշ դեպքերում, ինչպիսիք են դեռահաս աղջիկների նախագծերը, մենք ընդունում և խրախուսում ենք աղջիկներին ներկայացնել իրենց գաղափարները տեսանյութերի ձևաչափով: Մնացած դեպքերում մենք ՀԿՀ-ի դիմումի ձևաթուղթը տարածում ենք հայտարարության հետ: Դիմումները պետք է ներկայացվեն գրավոր ֆորմատով: ՀԿՀ-ի դիմումի ձևաթուղթը շատ պարզ է լրացնելու համար, դրան զուգահեռ, սակայն, այն պահանջում է ուշադրություն և հարգանք գործընթացի, ինչպես նաև՝ ձեր սեփական նախագծի նկատմամբ:

- Նախնական փուլում ՀԿՀ-ն ստուգում է հայտերի տեխնիկական համապատասխանությունը առկա պահանջներին: Այս փուլում մենք որևէ դիմում դուրս չենք թողնում, քանի որ կարծում ենք՝ ֆեմինիստական մեծ գաղափարները պարտադիր չէ, որ ուղեկցվեն դրամաշնորհային ծրագիր գրելու բարձրագույն հմտություններով: Այնուամենայնիվ, եթե այս փուլում տեսնում ենք հավելվածի թեմատիկ կամ ակտիվ անհամատեղելիություն ծրագրային թեմատիկայի հետ, մենք դուրս ենք հանում տվյալ դիմումը դիտարկվելիք դիմումների շարքից:
- Հաջորդ քայլը ներառում է առաջարկվող նախագծերի կարճ ամփոփումների և հայտերի տեխնիկական պատրաստվածության դիտարկումը՝ առանց ծրագրերի հեղինակների տվյալների իմացության: Խնդրում ենք նկատի ունենալ, որ ոչ բոլոր հայտերն է հնարավոր այսկերպ դիտարկել, քանի որ որոշ ներկայացված հայտերի կառուցվածքում կարող է լինել որոշակի տեղեկատվություն ծրագրի հեղինակների մասին

(կազմակերպության/անհատի. նախաձեռնության անվանման մասին հիշատակումներ կամ նախաձեռնության հղումներ հայտի մեջ):

- Հաջորդ քայլի ընթացքում մնացած բոլոր դիմումները քննվում և գնահատվում են:

  Հայտերը դիտարկում են անձիք/փորձագետներ՝

  1) Հիմնադրամից,

  2) Արտաքին փորձագետներ/գնահատողներ,

  3) Գործընկերուհիներից, որոնք պատրաստ են ներգրավվել գործընթացում (մասնակցային դրամաշնորհներ),

  4) ՀԿՀ խորհրդից,

  5) Վերը նշված անձանցից կազմված խառը խումբ
- Առաջին վերանայումից հետո ՀԿՀ-ը դիտարկում է ընտրված հայտերը՝ հիմնվելով ՀԿՀ ֆեմինիստական ֆինանսավորման սկզբունքների վրա:
- ՀԿՀ-ի վերանայումից հետո ընտրված դիմորդները հրավիրվում են անհատական հարցազրույցների:
- Հարցազրույցներից հետո (որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տեղի ունենալ մի քանի անգամ) ՀԿՀ-ը բաց հայտարարություն է տարածում ընտրված դիմորդների և նրանց նախագծերի մասին:
- Բոլոր դիմումները արխիվացվում են մեր առցանց պահոցում, որը հասանելի է միայն ՀԿՀ-ի անձնակազմին և դիմումները դիտարկողներին (յուրաքանչյուր նախագծի համար):
- Ոչ մի դիմում չի բացառվում դիտարկման գործընթացից:
- Հիմնադրամին ուղղված բոլոր դիմումներն ունեն հաջորդ ֆինանսավորման շրջանի ընթացքում կրկին քննարկվելու և դիտարկվելու հնարավորություն:

Մենք չենք ֆինանսավորում՝

- Կազմակերպությունների և խմբերի, որոնք չունեն կանանց, մարդու իրավունքների վերաբերյալ թեմատիկ ուղղվածություն:
- Կազմակերպությունների, որոնց միակ նպատակն է եկամուտ ստանալը և/կամ բարեգործությունը:

- Միջազգային կազմակերպությունների, որոնք առաջարկում են գործընկերություն տեղական մակարդակում:
- Կազմակերպությունների, որոնք հիմնված են կամ աշխատում են հիմնականում Հայաստանից դուրս:
- Կազմակերպությունների և կանանց խմբերի, որոնք արտադրում են ձեռագործ ապրանքներ և/կամ հետապնդում են միայն բիզնես նպատակներ և դրա հետ մեկտեղ չունեն ֆեմինիստական նկրտումներ:
- Տղամարդկանց կողմից ղեկավարվող կամ կառավարվող կազմակերպությունների:
- Պետական կառույցների, քաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզարշավների:

Հայաստանում կանանց հիմնադրամի առաջնահերթ հիմնահարցերը

- Կանանց կազմակերպությունների և խմբերի կարողությունների զարգացում,
- կանանց տարածաշրջանային ցանցի ստեղծում,
- պայքար գենդերային բռնության և խտրականության դեմ,
- առաջնորդություն երիտասարդ կանանց և դեռահասների կողմից,
- կանանց իրավունքների պաշտպանություն և համապատասխան գործողություններ,
- կանանց ներգրավում խաղաղասիրության գործընթացներում և դրանց վերականգնման գործում,
- ֆեմինիստական միջոցառումներ:

Հայաստանում կանանց հիմնադրամի կողմից դրամաշնորհների տրամադրման թեմաներ

- Երիտասարդ կանանց գործունեությունը համայնքներում,
- Աջակցություն դեռահաս աղջիկների շարժմանը,
- Կանայք արվեստում, ֆեմինիստական արվեստ և ստեղծագործական նախաձեռնություններ,

- Կանայք STEM ոլորտում (հատկապես Տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք օգնում են կանանց, և արհեստական բանականություն),
- Կանանց տնտեսական դիմակայունություն,
- Հակաֆեմինիստական և հակագենդերային շարժումների ուսումնասիրություններ,
- Ֆեմինիստական և կանանց վերաբերյան զգայուն հետազոտություններ,
- Ֆեմինիստական կրթաթոշակներ ուսանողների և հետազոտողների համար,
- Ինքնահոգատարություն, բարօրություն և ամոքում,
- Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ,
- Աջակցություն կանանց հետպատերազմական իրավիճակում՝ նրանց վերականգնման համար,
- Ֆեմինիստական շարժման հզորացում:

Ֆինանսավորման փուլեր և ժամկետներ

Տարվա ընթացքում Հիմնադրամը հայտարարում է դրամաշնորհների տրամադրման մի քանի հնարավորությունների մասին: Դրամաշնորհների տրամադրման գործընթացը, սովորաբար, սկսվում է փետրվարին և շարունակվում մինչև օգոստոս՝ ընդմիջումով: Այնուհետև գործընթացը վերսկսվում է մինչև դեկտեմբերի վերջ:

Փոքր ծրագրերի համար տևողությունը, սովորաբար, լինում է 1-ից 4 ամիս (առավելագույնը՝ 5 ամիս մինչև 1000 եվրո կամ ԱՄՆ դոլար դրամաշնորհների համար): Ավելի մեծ ծրագրերի համար կարող է հատկացվել 5-ից 9 ամիս (3000-ից 10000 եվրո կամ ԱՄՆ դոլար դրամաշնորհների համար):
Ծրագրի իրականացումը կարող է երկարաձգվել միայն դրամաշնորհառու-գործընկերոջ ողջամիտ հիմնավորման դեպքում:

ՀԿՀ-ի դրամաշնորհները, սովորաբար, հիմնված են հայտարարությունների և դիմումների վրա: Որոշ դեպքերում ՀԿՀ-ն դիմում է պոտենցիալ գործընկերուհիների և կազմակերպությունների՝ սեփական նախաձեռնությամբ: Այնուամենայնիվ, մենք նաև ընդունում ենք չնախատեսված ֆեմինիստական դիմումներ կազմակերպություններից և անձանցից: Այս դեպքում մենք

խրախուսում ենք զանգահարել կամ գրել նամակ՝ ձեր նախագծի գաղափարով՝ նախքան դիմումի գործընթացը սկսելը: Մենք ընդունում ենք այն հնարավոր փաստը, որ ծրագիրը և Հիմնադրամի ֆինանսավորման ուղղությունները կարող են լինել անհամատեղելի, կամ Հիմնադրամն այդ պահին չունենա ռեսուրսներ տվյալ ծրագրին հատկացնելու համար: Հիմնադրամի հետ նախնական քննարկումը կխնայի ձեր արժեքավոր ժամանակը: